» քաղքէն դուրս այլ երկու եկեղեցի »։ Այս յայտնէ թէ Խուսուսի մեծութիւնն և թէ Հայոց բազմութիւնն այն տեղ, բայց պատմիչն չի յիշեր ասոնց եկեղեցեաց անունները, իսկ Ղփտեաց՝ քիչ շատ. և վկայէ որ այս Սիւյուդ գաւառին մէջ ասոնք հարիւրաւոր եկեղեցիներ ունէին։

ՇԻՆԱՐԱ. — Դեղ մ'է ի Միջին Եգիպտոս, Նեղոսի արեւմտեան եզերքում, Ֆաշն կոչուած աւանին այլ արեւմտակողմը. 2700 բնակիչ ունէր յամին 1885, Ղփտի և Պէոտէվի։ « Շինարա վիճակին մէջ, կ'ըսէ » Աբուսահլ, Հայոց քրիստոնէից գաղթա- » կան մի հաստատուած էր, որք եօթն » եկեղեցի ունէին, շատ բարեկարգ, քա- » հանաներով և միաբաններով. եկեղեցեաց » մէկն էր յանուն Տիրուհւոյ անարատ կու- » սին Մարիամու. մէկն յանուն փառա- » ւորեալ Միքայէլ (հրեշտակապետի), միւս » երկու եկեղեցիք Ս. Մաքսիմոս (?), եր- » կու եկեղեցիք յանուն Գաբրիէլ հրեշ- » տակի, եկեղեցի մի Բաստիդար? بستيدر » կոչուած, եկեղեցի մ'այլ յանուն փա- » ռաւոր վկային Գէորգեայ »։ Եօթն ըսաւ, ինն համրեց. հաւանօրէն յանուն Հրեշտակապետաց Գաբրիելի և Միքայելի մէկ մէկ եկեղեցի ըլլալու էր, որով թիւն հաւասարի. իսկ վերջընթերին անունն և իսկն անծանօթ է մեզ։